

ABB - ԱԳՐՈ

Ոռոգման արդիական համակարգերի ներդրման համար տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի շրջանակներում տրամադրվող վարկեր

1	Պայմաններ	
1.1	Արժույթ	ՀՀ դրամ
1.2	Տարեկան անվանական տոկոսադրույք	<p>12%, որի մինչև 10% սուբսիդավորվում է պետության կողմից</p> <p>/ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N1444-Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված սահմանամերձ համայնքներում կամ գերնորմատիվային ջրապահանջարկ (համաձայն ՀՀ տարածքային կառավարման նախարարի 02. 04. 2007թ թիվ 18-Ա և ՀՀ գյուղատնտեսության նախարարի 02. 04. 2007թ թիվ 77-Ա համատեղ հրամանով հաստատված «Գյուղատնտեսական մշակաբույսերի ոռոգման նորմաներն ու ռեժիմները ՀՀ ոռոգելի տարածքների համար» ձեռնարկի) ունեցող հողատարածքներում ներդրման դեպքում, կամ առնվազն 3 հա հողատարածքում ներդրող գյուղատնտեսական գործունեություն ծավալող գյուղատնտեսական կոոպերատիվներին տրամադրված վարկերի տոկոսադրույքներն ամբողջությամբ սուբսիդավորվում են պետության կողմից/</p>
1.3	Պարտավորություն/ գրավ հարաբերակցություն	<ul style="list-style-type: none"> ▪ Ավանդային և բանկային հաշիվներում առկա դրամական միջոցների մինչև 100%-ի չափով, ընդ որում՝ նույն արժույթի դրամական միջոցների՝ մինչև 100%-ի չափով, տարբեր արժույթների դեպքում՝ մինչև 95%-ի չափով, ▪ Անշարժ գույքի դեպքում՝ մինչև 70%-ի չափով, ▪ Շարժական գույքի դեպքում՝ մինչև 50%-ի չափով, ▪ Ապրանքանյութական պաշարների դեպքում՝ մինչև 30%, սակայն տվյալ գրավատեսակի մասնաբաժինը առաջարկվող գրավի կառուցվածքում չի կարող գերազանցել 40%, ▪ Դրամական հոսքերի դեպքում՝ ոչ ավելի, քան բանկային հաշիվներով իրականացվող վերջին 12 ամիսների միջին ամսական գուտ կրեդիտային շրջանառության 50 տոկոսի չափով: Միջին ամսական գուտ կրեդիտային շրջանառությունը հաշվարկվում է վերջին 12 ամսվա կտրվածքով, իսկ 12 ամսից պակաս Բանկի հաճախորդ լինելու պարագայում՝ վերջին 6 ամսվա կտրվածքով:
1.4	Ժամկետ	1-3 տարի
1.5	Արտոնյալ ժամկետ	Վարկի մայր գումարի նկատմամբ՝ առավելագույնը տարեկան 6 ամիս
1.6	Մարման եղանակ	Տոկոսների և մայր գումարի մարումները՝ ամենամսյա
1.7	Գումար	<ol style="list-style-type: none"> 1. Կապալառուի միջոցով աշխատանքների (սխեմայի կազմում, կապիտալ ծախսեր, ներդրման աշխատանքներ) իրականացման դեպքում՝ 1,000,000- 150,000,000 ՀՀ դրամ, ընդ որում՝ 1 հա-ի համար յուրաքանչյուր վարկառուին տրամադրվող վարկի առավելագույն գումարը կազմում է՝ <ol style="list-style-type: none"> 2.2 մլն ՀՀ դրամ՝ կաթիլային ոռոգման համար, 2.7 մլն ՀՀ դրամ՝ անձրևացման համակարգի համար, 2. Առանց կապալառուի աշխատանքների (մոտեցնող խողովակ, գլխամասային հանգույց, բաշխիչ ցանց) իրականացման դեպքում՝ 1,000,000- 110,000,000 ՀՀ դրամ, ընդ որում՝ 1 հա-ի համար յուրաքանչյուր վարկառուին տրամադրվող վարկի առավելագույն գումարը կազմում է՝ <ol style="list-style-type: none"> 1.6 մլն ՀՀ դրամ՝ կաթիլային ոռոգման համար, 1.9 մլն ՀՀ դրամ՝ անձրևացման համակարգի համար:
1.8	Վաղաժամկետ մարման տույժ, տուգանք	Չի կիրառվում
1.9	Գործողության տարածք	ՀՀ
1.10	Ֆինանսավորման նպատակ	Ներդրումներ գյուղատնտեսական մշակաբույսերով զբաղեցված տարածքներում՝ բացառությամբ ջերմատների և ջերմոցային տնտեսությունների:
1.11	Լրացուցիչ պայման	Կապալառուի միջոցով աշխատանքների իրականացման դեպքում՝ կաթիլային

		ռոտզման համակարգը պետք է ներդրվի ՀՀ Գյուղատնտեսության նախարարության կողմից հրապարակված ցանկում ընդգրկված Կապալառուի կողմից:
2	Բանկի միջնորդավճար	
2.1	Դիմում-հայտի ուսումնասիրության միջնորդավճար	0 ՀՀ դրամ
2.2	Սպասարկման միջնորդավճար	0 ՀՀ դրամ
2.3	Վարկային միջոցների կանխիկացման միջնորդավճար	0 ՀՀ դրամ
3	Ապահովվածություն	
3.1	Գրավի առարկա	Ավանդային և բանկային հաշիվներում առկա դրամական միջոցներ, անշարժ և շարժական գույք, հիմնական միջոցներ, երաշխիքներ և երաշխավորություններ, արժեթղթերի գրավ, բաժնետոմսի գրավ, բաժնեմասի գրավ, փայի գրավ, դրամական հոսքեր (դրամական միջոցների նկատմամբ պահանջի իրավունք), շրջանառու միջոցներ, իրավունքի գրավ, խառը գրավ և Բանկի կողմից ընդունելի այլ գրավ:
3.2	Լրացուցիչ պայման	Բնակելի նշանակության անշարժ գույքի գրավադրման ժամանակ Գրավատուն ներկայացնում է սեփականության իրավունքի ծագման հիմքերը, և եթե դրանք Գրավատուին են փոխանցվել նվիրատվության գործարքի հիման վրա և սեփականությունը փոխանցվել է Վարկի ստացման վերաբերյալ դիմում-հայտի ներկայացնելուն նախորդող հինգ տարվա ընթացքում, ապա. 1. պահանջվում է լրացուցիչ ապահովվածություն՝ նվիրատուի երաշխավորություն, ընդ որում տրամադրվող վարկի գումարը չի կարող գերազանցել գրավի գնահատված լիկվիդային արժեքի 50%-ը, կամ 2. պահանջվում է լրացուցիչ ապահովվածություն՝ երրորդ անձի երաշխավորություն, ընդ որում վարկի գումարը չի կարող գերազանցել գրավի գնահատված լիկվիդային արժեքի 25%-ը: * սույն ենթակետը կիրառելի չէ, եթե Վարկի ստացման վերաբերյալ դիմում-հայտի ներկայացման պահին նվիրատուն մահացած է
3.3	Պարտադիր պայման	✓ Իրավաբանական անձ հաճախորդների դեպքում՝ մասնակցի (մասնակիցների) 100% բաժնետոմսերի, բաժնեմասերի, փայերի պարտադիր գրավադրում: ✓ Իրավաբանական անձ հաճախորդների դեպքում՝ 10% և ավել բաժնետոմս, բաժնեմաս, փայ ունեցող մասնակցի (մասնակիցների) կողմից երաշխավորության պարտադիր տրամադրում:
4	Գրավի գնահատում և ապահովագրություն	
4.1	Գրավի արժեքի գնահատում	Անշարժ և շարժական գույքերի, հիմնական միջոցների, շրջանառու միջոցների գնահատումը իրականացվում է Բանկի հետ համագործակցող անկախ գնահատող ընկերությունների կողմից: Արժեթղթերի, Բանկի կողմից ընդունելի այլ գույքերի և իրավունքի գնահատումը իրականացվում է Բանկի հետ համագործակցող անկախ գնահատող ընկերությունների կողմից՝ ըստ անհրաժեշտության:
4.2	Ապահովագրություն	Ըստ անհրաժեշտության
5	Վարկառուի նկատմամբ պահանջներ	
5.1	Վարկառու	Իրավաբանական անձինք, անհատ ձեռնարկատերեր, ֆիզիկական անձինք
5.2	Վարկառուին ներկայացվող պահանջներ	Վերջին 12 ամիսների ընթացքում վարկային պարտավորությունների գծով ընդհանուր ուշացրած օրերի քանակ՝ ոչ ավել, քան 36 օր (եթե Վարկառուի գործունեության ժամկետը 1 տարուց պակաս է, ապա վարկային պարտավորությունների գծով ժամկետանց օրերի քանակը չպետք է գերազանցի փաստացի գործունեության օրվանից սկսած յուրաքանչյուր ամսվա համար 3 օրը՝ կուտակային սկզբունքով):
5.3	Լրացուցիչ պայման	Վարկառուի ֆինանսական հաշվետվությունների վերլուծության արդյունքում

		ստացվող ֆինանսական ցուցանիշները պետք է բավարարեն Բանկի պահանջներին:
6	Երաշխավորի նկատմամբ պահանջներ	
6.1	Երաշխավոր	ՀՀ-ում կամ ԱՀ-ում գրանցված ռեզիդենտ իրավաբանական անձ, անհատ ձեռնարկատեր, ֆիզիկական անձ
6.2	Երաշխավորին ներկայացվող պահանջներ	<ul style="list-style-type: none"> • Առնվազն 6 ամսվա անընդմեջ գործունեություն ծավալած իրավաբանական անձ, անհատ ձեռնարկատեր և 21-63 տարեկան ֆիզիկական անձ. • Ժամկետանց պարտավորությունների բացակայություն (ներառյալ՝ տրամադրված երաշխավորությունների գծով). • Նախորդ 12 ամիսների ընթացքում վարկային պարտավորությունների գծով ընդհանուր ուշացրած օրերի քանակը չպետք է գերազանցի 36 օրը (ներառյալ տրամադրված երաշխավորությունների գծով), (եթե Երաշխավորի գործունեության ժամկետը 1 տարուց պակաս է, ապա վարկային պարտավորությունների գծով ժամկետանց օրերի քանակը չպետք է գերազանցի փաստացի գործունեության օրվանից սկսած յուրաքանչյուր ամսվա համար 3 օրը՝ կուտակային սկզբունքով):
7	Լրացուցիչ պայմաններ	
7.1	Ժամկետանց գումարի տոկոսադրույք	ՀՀ ԿԲ կողմից սահմանված բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկ
7.2	Ժամկետանց տոկոսի տույժ	0,13% օրական